ԾՆՈՂԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԾՆՈՂԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2026

ՀՏԴ
ԳՄԴ
Ծնողի դերը երեխայի խոսքի և հաղորդակցման զարգացման գործընթացում: Ձեռնարկ ծնողի համար / Թադևոսյան Է. Ռ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2026. - 32 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.02.2026 թվականի 219-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ.Ա.

Հեղինակ՝
Թադևոսյան Էմիլյա Ռադիկի
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թադևոսյան Հ.Վ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ.Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարոյան Լ.Գ., Դավթյան Հ.Լ.

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին համընդհանուր ներառական կրթության իրականացման գործընթացում մանկավարժական և մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN ՀՏԴ
ԳՄԴ

©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՆՈՂԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 4

ՈՉ ՎԵՐԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 10

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ. ԻՆՉՊԵ՞Ս ՆՊԱՍՏԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՈՉ ՎԵՐԲԱԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ 11

0-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՉ ՎԵՐԲԱԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ԶԱՐԳԱՑՆՈՂ ԽԱՂԵՐ 14

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ. ԼԵԶՎԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ 26

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... 30

ԾՆՈՂԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խոսքի և հաղորդակցման զարգացումը երեխայի ճանաչողական, սոցիալական և հուզական զարգացման առանցքային մասն է: Այն բարդ, համակարգված գործընթաց է, որն սկսվում է ծնունդից շատ առաջ և շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում: Խոսքի զարգացումը մանկական տարիքում ընդհանուր հոգեկան զարգացման կարևորագույն ասպեկտներից է: Խոսքային գործունեությունն իրականացվում է լեզվի միջոցով, որը երեխան յուրացնում է շրջապատող մարդկանց հետ շփման ընթացքում: Շփմանը զուգահեռ երեխան աստիճանաբար սովորում է հասկանալ շրջապատող մարդկանց խոսքը և կապակցված արտահայտել իր մտքերը: Խոսքը հնարավորություն է տալիս երեխային բառերով արտահայտել իր զգացմունքներն ու ապրումները, օգնում է իրականացնել գործունեության ինքնակարգավորումն ու ինքնավերահսկողությունը: Խոսքի զարգացումը թույլ է տալիս երեխային օգտագործել լեզուն տարբեր սոցիալական իրավիճակներում, արդյունավետ փոխազդեցության մեջ մտնել մեծահասակների և հասակակիցների հետ (Карпова, Кузнецова, Поприк, 2019):

Երբ մենք խոսում ենք երեխայի զարգացման մասին, հաճախ կենտրոնանում ենք առաջին բառերի, նախադասությունների կամ քայլերի վրա: Սակայն մինչև երեխայի խոսքի ձևավորումը նա արդեն ունենում է

հաղորդակցման հզոր գործիք՝ **ոչ վերբալ, այսինքն՝ ոչ խոսքային** հաղորդակցումը:

Ոչ վերբալ հաղորդակցում

Ոչ վերբալ հաղորդակցումը ներառում է այն բոլոր միջոցները, որոնցով երեխան արտահայտում է իր մտքերը, ցանկությունները, հույզերն ու զգացմունքները և փոխազդում աշխարհի հետ՝ առանց բառերի օգտագործման: Այն հիմք է հանդիսանում ապագա լիարժեք խոսքային հաղորդակցության համար:

Ոչ վերբալ զարգացումը ներառում է երկու հիմնական ոլորտ.

1. **Հաղորդակցման ոչ վերբալ միջոցներ**: Սրանք այն միջոցներն են, որոնցով երեխան տեղեկատվություն է փոխանցում: Դրանք են.
   - *Մարմնի լեզուն և ժեստերը*. մատով ցույց տալը, գլխով «այո»-ի կամ «ոչ»-ի շարժում անելը, գրկելու, համբուրելու կամ հրաժեշտ տալու շարժումները:
   - *Դիմախաղը (միմիկա)*. ուրախություն (ժպիտ), տխրություն, զարմանք, բարկություն:
   - *Հայացքը և աչքի կոնտակտը*. ուշադրությունը ֆիքսելու և կիսելու ունակություն (միասնական ուշադրություն):
   - *Ինտոնացիան և ձայնարկությունները*. ճիչ, գղգղանք, թոթովանք, լաց, որոնք արտահայտում են կարիք կամ զգացմունք:
2. **Ընկալման ոչ վերբալ հմտությունները:** Սրանք այն հմտություններն են, որոնցով երեխան ընկալում է աշխարհից եկող ոչ խոսքային տեղեկատվությունը:

- *Հասկանալ դիմախաղը.* ընկալել, թե ուրիշի դեմքի արտահայտությունը (օրինակ՝ մոր ժպիտը) ինչ հույզ է փոխանցում:
- *Հետևել հայացքին.* հասկանալ, թե իր հետ հաղորդակցվող անձը որտեղ է կենտրոնացրել իր ուշադրությունը (միասնական ուշադրություն):
- *Մարմնի լեզվի ընկալումը.* հասկանալ, թե երբ է մեծահասակը ձգում ձեռքը՝ գրկելու, կամ երբ է թափահարում մատը՝ զգուշացնելու համար (https://novatorkids.ru/rol-neverbal-nogo-obshcheniya-v-razvitii-rechi):

Ներկայացնենք **ոչ վերբալ հաղորդակցման զարգացման փուլերը 0-3 տարեկան հասակում**: Ոչ վերբալ հաղորդակցումը զարգանում է աստիճանաբար՝ դառնալով ավելի բարդ և մտածված.

1. 0-6 ամսականում՝ հուզական (դեմքով) հաղորդակցություն,
2. 6-12 ամսականում՝ ժեստերի և ինտոնացիայի զարգացում,
3. 12-24 ամսականում՝ հաղորդակցման գործնական միջոցների կիրառում,
4. 2-3 տարեկանում՝ սոցիալական և հուզական կարգավորում:

Աղյուսակ 1-ում ներկայացված են հիմնական ոչ վերբալ հմտությունների զարգացման տարիքային փուլերը, իսկ աղյուսակ 2-ում՝ ոչ վերբալ հաղորդակցման ոչ բնականոն (դիզօնտոգենետիկ) զարգացման ցուցանիշները:

Ոչ վերբալ հմտությունների զարգացման տարիքային շրջանները

Աղյուսակ 1.

ՏԱՐԻՔ	ՀԻՄՆԱԿԱՆ ՈՉ ՎԵՐԲԱԼ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Ի՞ՆՉ Է ՑՈՒՅՑ ՏԱԼԻՍ
0-6 ամսական	Սոցիալական ժպիտ (2 ամսական), հայացքի ֆիքսում (աչք-աչք կոնտակտ), տարբերակված ճիչեր (քաղց, ցավ):	Հույզերը և սկզբնական կապն աշխարհի հետ:
6-12 ամսական	Թոթովանք (բաղաձայն-ձայնավորի (վանկի) կրկնություն), հասկանում է իր անունը, ցուցական ժեստ (խնդրելու կամ ցույց տալու համար), հետևում է հայացքին (միասնական ուշադրություն):	Հաղորդակցման մտադրության և ինտոնացիայի ընկալման հիմքերի ձևավորում:
12-24 ամսական	Օգտագործում է ժեստեր («արի», «գնա»), խաղում է առանց խոսելու:	Ոչ վերբալ հաղորդակցումից անցում վերբալ (խոսքային) հաղորդակցման:
24-36 ամսական	Մարմնի լեզուն օգտագործում է հույզերը արտահայտելու համար (օրինակ՝ դժգոհություն, ուրախություն), հասկանում է ուրիշների զգացմունքները դիմախաղի միջոցով:	Հուզական/սոցիալական բանականության զարգացում:

Ոչ վերբալ հաղորդակցման ոչ բնականոն զարգացման ցուցիչները

Աղյուսակ 2.

ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇՐՋԱՆ	ՆՈՐՄՈՏԻՊԻԿ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	ՈՉ ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	ՀՆԱՐԱՎՈՐ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՆԵՐ
0-6 ամսական	Սոցիալական ժպիտ (2 ամս.) և աչք-աչք կոնտակտի ֆիքսում:	Հայացքի ֆիքսման բացակայություն կամ անկայունություն, դեմքի հուզական արտահայտություն ների պակաս:	Աուտիզմ (աուտիստիկ սպեկտրի խանգարումներ՝ ԱՍԽ), մանկական ուղեղային կաթվածի (ՄՈՒԿ) ծանր ձևեր, մտավոր զարգացման խանգարում:
6-12 ամսական	Ցուցական ժեստ և միասնական ուշադրություն (հետևում է հայացքին):	Ցուցական ժեստի բացակայություն (չի ցույց տալիս ուզած առարկան), չի հետևում ուրիշի հայացքին կամ մատին:	Աուտիզմ (ԱՍԽ) (սոցիալական հաղորդակցությա ն խանգարում), լսողության խանգարում:
12-24 ամսական	Առարկայական խաղ, ժեստերի կիրառում:	Սիմվոլիկ խաղի բացակայություն (օրինակ՝ տիկնիկին չի կերակրում), էխոլալիա, ժեստերի բացակայություն:	Աուտիզմ (ԱՍԽ), խոսքի ընդհանուր թերզարգացում (ԽԸԹ), ալալիա, մտավոր զարգացման խանգարում:

24-36 ամսական	Զգացմունքների արտահայտում մարմնի լեզվի միջոցով: Հասկանում է դիմացինի տրամադրությունը դիմախաղի միջոցով:	Դեմքի սահմանափակ կամ անհամապատասխան արտահայտություններ, դժվարություն զգացմունքների փոխանակման կամ արձագանքման հարցում, մարմնի ճիշտ դիրք և կեցվածք ընդունելու դժվարություն, մեծահասակների պարզ գործողությունների կամ ձայների (հնչյունների) կրկնության բացակայություն, մեծահասակի հետ համատեղ աշխատանքներում չի կարողանում պահպանել գործողությունների հերթականություն:	Աուտիզմ (ԱՍԽ), ԽԸԹ, ալալիա, մտավոր զարգացման խանգարում:

ՈՉ ՎԵՐԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ոչ վերբալ հաղորդակցման հմտությունները ոչ միայն հաղորդակցման այլընտրանք են, այլև խոսքի ձևավորման կարևոր նախապայման:

Կապը մտքի և բառի միջև: Ժեստերը և միասնական ուշադրությունը երեխային սովորեցնում են, որ հաղորդակցումն ունի նպատակ (ինչ-որ բան խնդրել կամ ինչ-որ բան արտահայտել): Այս մտադրության առկայությունն է, որ դրդում է նրան ժեստը փոխարինել բառով:

Հուզական բանականության հիմքը

Ոչ վերբալ հաղորդակցման միջոցով երեխան սովորում է.

- Կարգավորել զգացմունքները. հասկանալ իր և ուրիշների զգացմունքները՝ հիմնվելով դիմախաղի և ինտոնացիայի վրա:
- Պահպանել հերթականություն. մեծահասակի հետ շփման ժամանակ սովորում է հերթով «խոսել» և «լսել» (օրինակ՝ գղգղանքով պատասխան տալը), ինչը հետագայում տեղափոխվում է զրույցի հարթություն (https://easterntherapync.com/beyond-words-understanding-nonverbal-communication-in-speech-therapy):

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ. ԻՆՉՊԵ՞Ս ՆՊԱՍՏԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՈՉ ՎԵՐԲԱԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

Ծնողի դերը ոչ վերբալ հաղորդակցման զարգացման գործում անփոխարինելի է: Ծնողի հետ շփումն է երեխայի հաղորդակցման առաջին և գլխավոր մոդելը: Ստորև ներկայացված են խորհուրդներ, որոնք կօգնեն ծնողներին աջակցել երեխաների ոչ խոսքային, հետագայում նաև խոսքային հաղորդակցման ձևավորմանը.

1. ***Եղե՛ք արձագանքող:***

Ամեն անգամ, երբ երեխան օգտագործում է ոչ վերբալ միջոց (ժեստ, ճիչ, հայացք), անմիջապես արձագանքեք դրան խոսքով և գործողությամբ: Օրինակ՝ եթե երեխան մատով ցույց է տալիս գնդակը, անմիջապես նայե՛ք գնդակին և ասե՛ք. «Ուզո՞ւմ ես գնդակը» և տվեք այն: Այսպես դուք բառով կամրապնդեք երեխայի ոչ վերբալ հաղորդակցումը:

2. ***Օգտագործե՛ք դիմախաղ և արտահայտված ինտոնացիա:***

Ավելացրե՛ք խոսքի արտահայտչականությունը: Երեխայի հետ շփման ժամանակ մի՛ վախեցեք չափազանցնել ձեր դիմախաղը (ուրախ, զարմացած, տխուր): Սա օգնում է երեխային հստակ տարբերակել զգացմունքները: Օգտագործեք նաև ինտոնացիա: Բարձրացրեք ձայնի տոնը հարցեր տալիս, փոխեք ռիթմը՝ ուշադրությունը գրավելու համար:

3. ***Խրախուսե՛ք ցուցական ժեստի (մատնացույցի) կիրառումը:***

Հաճախակի խաղացեք «ցույց տալու» խաղեր: Օրինակ՝ գիրք կարդալիս հարցրեք. «Որտե՞ղ է շունը», և սպասեք, որ երեխան ցույց տա: Երբ երեխան ինչ-որ բան է ուզում, սպասեք, որ ասի կամ մատով ցույց տա (ոչ թե աղաղակի), ապա անվանեք այդ առարկան:

4. ***Ընդօրինակե՛ք երեխային:***

Ընդօրինակեք երեխայի ոչ վերբալ «խոսքը» (օրինակ՝ գղգղանքը, թոթովանքը): Սա երեխային սովորեցնում է հաղորդակցման ընթացքում պահպանել հերթականություն և ամրապնդում է այն միտքը, որ նրա արտահայտությունները կարևոր են (https://specialeducationcambodia.com/the-role-of-nonverbal-communication-in-speech-therapy-what-children-learn-beyond-words/):

Ե՞րբ պետք է անհանգստանալ

Գոյություն ունեն ոչ վերբալ զարգացման ոչ ճիշտ ընթացքի մասին վկայող ցուցիչներ, որոնց առկայության դեպքում ցանկալի է դիմել մասնագետի (մանկական նյարդաբան, լոգոպեդ, զարգացման մանկաբույժ, հոգեբան և այլն): Անհրաժեշտ է անհանգստանալ, եթե.

- 9 ամսական հասակում բացակայում են աչքի տևական իմաստավորված կոնտակտը և սոցիալական ժպիտը:
- 12 ամսական հասակում բացակայում է ցուցական ժեստը, երեխան չի հետևում ծնողի հայացքին:

- 18 ամսական հասակում երեխան չի փորձում հաղորդակցվել ուրիշների հետ (խնդրել, ողջունել, բողոքել ո՛չ ժեստերով և ո՛չ էլ բառերով):

Անհրաժեշտ է հիշել, որ ոչ վերբալ հաղորդակցումը վերբալ հաղորդակցման հիմքն է: Եթե երեխայի մոտ լավ են զարգացած այս հմտությունները, խոսքը շատ հաճախ հայտնվում է բնականորեն, առանց դժվարությունների (Robins, Fein, & Barton, 2009):

Ոչ վերբալ հաղորդակցումը զարգացնող խաղեր

Քանի որ ոչ վերբալ հաղորդակցումը (ժեստեր, միմիկա, ինտոնացիա, հայացք) կենսական դեր ունի ապագա խոսքի և սոցիալական հմտությունների զարգացման գործում, այն պետք է խրախուսել խաղային եղանակով:

Ստորև ներկայացված են 0-6 տարեկան երեխաների ոչ վերբալ հաղորդակցումը զարգացնող խաղերի և համատեղ գործողությունների օրինակներ՝ ըստ տարիքային փուլերի:

0-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՉ ՎԵՐԲԱԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

ԶԱՐԳԱՑՆՈՂ ԽԱՂԵՐ

0-1 տարեկան («Հաղորդակցման հիմքերի» ձևավորում)

Այս շրջանում խաղերի նպատակն է զարգացնել.

- աչքի կոնտակտը,
- հուզական արձագանքը,
- հերթականություն պահելու կարողությունը,
- առաջին ժեստերը:

Խաղ «Զրույց առանց բառերի»

Նպատակը՝ Զարգացնել հուզական արձագանքը և հերթականությամբ գործելու կարողության նախադրյալները:

Խաղի ընթացքը՝ Անհրաժեշտ է, որ երեխան գտնվի մեծահասակի դեմքի մոտ (մոտ 30 սմ հեռավորության վրա): Երբ երեխան «գղգղում» կամ որոշակի ձայնարկություններ է արձակում, պետք է պատասխանել նույն հնչյուններով կամ կարճ, առոգանությամբ հագեցած արտահայտություններով: Անհրաժեշտ է կրկնել նրա արտաբերած ձայնարկումները (օրինակ՝ «ա-ղու», «բա-բա»), ապա դադար տալ, որ նա նորից «խոսի»:

Այս գործունեության ընթացքում զարգանում է հերթականություն պահպանելու, ինտոնացիան նմանակելու կարողությունը:

Խաղ Ցուցական ժեստի զարգացում

Նպատակը՝ Զարգացնել միասնական ուշադրությունը և ցուցական ժեստը (մոտ 9-12 ամսականում):

Խաղի ընթացքը՝ Երեխայի առաջ դրվում են մի քանի հետաքրքիր խաղալիքներ կամ գրքեր: Մեծահասակը մատով դանդաղորեն ցույց է տալիս մեկ առարկա՝ միաժամանակ անվանելով այն: Երբ երեխան նայում է ցույց տված օբյեկտին, անհրաժեշտ է ուրախ ժպտալ և ասել. «Այո՛, սա գնդակ է»: Այնուհետև մեծահասակն իր ձեռքը դնում է երեխայի ձեռքի վրա և օգնում նրան ցույց տալ օբյեկտը:

Այս խաղի ընթացում զարգանում են հայացքին հետևելու, ինչպես նաև ձեռքի շարժումը որպես հաղորդակցման միջոց կիրառելու կարողությունները:

Խաղ «Ծի՛կ»

Նպատակը՝ Զարգացնել ակնկալիքի զգացումը, ուրախ արձագանքը և աչքերի կոնտակտը:

Խաղի ընթացքը՝ Մեծահասակը ծածկում է իր դեմքը ձեռքերով կամ շորով, ապա արագորեն բացում՝ ասելով «Ծի՛կ»՝ մեկ ուրախ, մեկ էլ՝ զարմացած արտահայտությամբ:

Այս խաղի ընթացքում զարգանում են դիմախաղը և առոգանությունը փոփոխելու կարողությունները (https://www.unicef.org/parenting/child-care/21-learning-activities-babies-and-toddlers):

1-3 տարեկան (ժեստերով հաղորդակցվելու կարողության զարգացում)

Այս շրջանում երեխաներն արդեն օգտագործում են առաջին բառերը, բայց ոչ վերբալ հաղորդակցումը մնում է շփման հիմնական միջոցը: Երեխան սովորում է ժեստերով և դիմախաղով լրացնել խոսքը, ինչպես նաև հասկանալ ուրիշների հույզերը:

Խաղ «Ժեստերով երգեր»

Նպատակը՝ Ամրապնդել սոցիալական ժեստերը և ընդօրինակման կարողությունը:

Խաղի ընթացքը՝ Անհրաժեշտ է երեխայի համար երգել պարզ երգեր (օրինակ՝ «Արև, արև, ե՛կ, ե՛կ», «Քեռին եկավ մեր բակը») և ուղեկցել դրանք պարզ, բազմիցս կրկնվող ժեստերով (թափահարել, ծափ տալ, ցույց տալ): Երեխային պետք է խրախուսել կրկնել ժեստերը, ապա նաև ինքնուրույն անել (օրինակ՝ «հրաժեշտ տալ» կամ «ուտել» ժեստերը):

Այս գործունեության ընթացքում զարգանում է ժեստերն ընդօրինակելու կարողությունը:

Խաղ 2. «Զգացմունքների բացահայտում»

Նպատակը՝ Զարգացնել զգացմունքները ճանաչելու ունակությունը դիմախաղի միջոցով:

Խաղի ընթացքը՝ Անհրաժեշտ է հայելի կամ գրքեր՝ մեծ, հստակ դեմքերով: Փոխեք ձեր դիմախաղը՝ ուրախ, տխուր, զարմացած, բարկացած: Ասացեք. «Մայրիկն ուրա՜խ է»,

«Արջուկը տխո՛ւր է»: Խրախուսեք երեխային կրկնել դեմքի արտահայտությունները:

Այս աշխատանքը նպաստում է դիմախաղը հասկանալու և այն ընդօրինակելու կարողությունների զարգացմանը:

Խաղ «Խնդրանքի ժեստեր»

Նպատակը՝ Խրախուսել երեխային օգտագործել ժեստերը՝ կարիքներն արտահայտելու համար:

Խաղի ընթացքը՝ Անհրաժեշտ է երեխայի ցանկալի խաղալիքը կամ ուտելիքը տեղադրել նրա համար դժվար հասանելի տեղում (օրինակ՝ բարձր դարակի վրա), ապա սպասել, որ երեխան նայի մեծահասակին կամ ցույց տա օբյեկտը (ժեստի միջոցով) կամ էլ ձայն արձակի՝ ուշադրություն գրավելու համար: Երբ նա դա անում է, հարկավոր է ժպտալ, անվանել օբյեկտը և տալ երեխային: Պետք չէ գուշակել նրա ցանկությունները, անհրաժեշտ է թույլ տալ, որ նա «հաղորդակցվի» մեծահասակի հետ:

Այս աշխատանքը երեխայի մեջ ձևավորում է առանց բառերի հաղորդակցվելու ցանկություն (https://www.unicef.org/parenting/child-care/21-learning-activities-babies-and-toddlers):

3-6 տարեկան (Սոցիալական ոչ վերբալ կարգավորում)

Այս շրջանում խոսքը հաղորդակցման հիմնական ձևն է: Միևնույն ժամանակ ոչ վերբալ հմտությունները

կատարելագործվում են, բարդանում՝ ծառայելով սոցիալական փոխազդեցությունը կարգավորելու նպատակին:

Խաղ «Մարմնի լեզուն»

Նպատակը՝ Զարգացնել մարմնի լեզուն՝ որպես զգացմունքներ և վիճակներ փոխանցող միջոց:

Խաղի ընթացքը՝ Անհրաժեշտ է երեխային պատմել մի պարզ պատմություն, օրինակ՝ առյուծի մասին, որը զայրացել էր, ապա ուրախացել: Այս ընթացքում անհրաժեշտ է օգտագործել ամբողջ մարմինը և դեմքը՝ զգացմունքները ցույց տալու համար. զայրացած առյուծը՝ կորացած մարմին, կիտած հոնքեր, ուրախ առյուծը՝ ուղիղ կեցվածք, լայն ժպիտ: Այնուհետև պետք է խնդրել երեխային կրկնել շարժումները և բացատրել, թե ինչպես կարելի է «խոսել մարմնի լեզվով»՝ առանց բառերի:

Այս աշխատանքը նպաստում է «մարմնի լեզվի» գիտակցված օգտագործմանը:

Խաղ «Ինտոնացիոն դերեր»

Նպատակը՝ Զարգացնել խոսքի ինտոնացիոն կողմը և դրա ազդեցությունը բառի իմաստի վրա:

Խաղի ընթացքը՝ Անհրաժեշտ է արտասանել պարզ բառ կամ նախադասություն (օրինակ՝ «Եկա՛վ»)՝ փոխելով դրա ինտոնացիան.

- ուրախ ինտոնացիայով («Եկա՛վ»)
- զարմացած ինտոնացիայով («Եկա՞վ»)
- ձանձրացած ինտոնացիայով («Եկավ…»)

Այնուհետև խնդրել երեխային կռահել, թե ինչ հույզ է արտահայտված յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Վերջում երեխան է փորձում բառն արտաբերել տարբեր հույզերով:

Այս աշխատանքը նպաստում է խոսքի առոգանության և ձայնի տոնի ընկալման և կիրառման կարողությունների զարգացմանը:

Խաղ «Ասա՛ առանց խոսքի»

Նպատակը՝ Զարգացնել հաղորդակցման հմտությունների ճկունությունը և երևակայությունը:

Խաղի ընթացքը՝ Անհրաժեշտ է երեխայի հետ խաղալ մնջախաղ: Մեծահասակն ասում է երեխային, թե նա ինչ պետք է ցույց տա (օրինակ՝ «Մարդը լողում է», «Կատուն ուտում է»), իսկ նա պետք է դա ցույց տա առանց բառերի:

Այս աշխատանքը նպաստում է միայն «մարմնի լեզվով» և դիմախաղով բարդ գաղափարներ և գործողություններ արտահայտելու կարողության ձևավորմանը (https://www.unicef.org/parenting/child-care/21-learning-activities-babies-and-toddlers):

Երեխայի հաղորդակցման զարգացման աշխատանքի սկզբունքները (ծնողների միջամտության դերը)

Վերոնշյալ խաղերի արդյունավետությունը մեծանում է, երբ ծնողները հետևում են հետևյալ սկզբունքներին.

- **Լինել արձագանքող**: Հարկավոր է մշտապես արձագանքել երեխայի ոչ վերբալ հաղորդակցման ցանկացած փորձին:

Եթե նա ցույց է տալիս որևէ օբյեկտ, ապա այն պետք է անվանել: Եթե երեխան ծիծաղում է, պետք է ծիծաղել նրա հետ: Սա ամրապնդում է այն միտքը, որ նրա հաղորդակցումը «գործում է»:

- **Երեխայի ուշադրությունը հրավիրել մարմնի շարժումների վրա:** Երեխայի հետ շփվելիս մարմինը պետք է պահել նրա տեսադաշտում: Մեծահասակի դեմքը և ձեռքի շարժումները պետք է լինեն հստակ և չափազանցված:
- **Արձագանքել երեխայի հաղորդակցման ոչ վերբալ դրսևորումներին**: Անհրաժեշտ է անվանել այն, ինչ տեսնում եք: Օրինակ՝ «Ես տեսնում եմ, որ դու բարկացած ես, քանի որ հոնքերդ կիտել ես», «Դու ժպտացիր, ուրեմն քեզ դուր եկավ»:
- **Պահպանել հերթականություն**: Բոլոր խաղերում պետք է շեշտը դնել հերթականության պահպանման վրա՝ սկզբում գործողությունը կատարում է մեծահասակը, հետո երեխան, ապա նորից մեծահասակը: Այս գործընթացը երեխային նախապատրաստում է զրույցին:
- **Նվազեցնել անմիջական բավարարումը**: Պետք չէ թույլ տալ, որ երեխան միայն ճիչով, լացով կամ աղաղակելով ստանա այն, ինչ ուզում է: Պետք է մի փոքր սպասել, որ նա գոնե հայացքով կամ ցուցական ժեստով փորձի հաղորդակցվել:

Այս սկզբունքների պահպանումը և խաղերի անցկացումը ամուր հիմք կձևավորեն երեխայի հետագա լիարժեք խոսքային և սոցիալական զարգացման համար

(https://raisingchildren.net.au/toddlers/connecting-communicating/communicating/toddlers-talking):

Խոսքի և հաղորդակցման զարգացման հիմնական փուլերն օնտոգենեզում

Տարբերում են խոսքի 2 հիմնական տեսակ՝ էքսպրեսիվ (խոսքի արտաբերում) և իմպրեսիվ *(խոսքի ընկալում):*

Խոսքի և հաղորդակցման զարգացման ընթացքը բաժանվում է մի քանի շրջանների: Ներկայացնենք դրանք:

1. **Մինչբառային (նախալեզվական) շրջան (0-1 տարեկան)**

Այս շրջանն իր հերթին բաժանվում է մի քանի փուլերի.

- **0-3 ամսական՝** ռեֆլեքսային ձայնարկումներ և բացականչություններ

Հաղորդակցում: Լաց, ճիչեր (քաղցի, անհարմարության, հաճույքի արտահայտում), հայացքի հետևում, ժպիտ՝ ի պատասխան մեծահասակի ժպիտի կամ ձայնի:

Էքսպրեսիվ խոսք: Գոգղանք (աղու, ագու), («աաա՜», «ուուո՜ւ» ձայնավոր հնչյուններ)՝ հաճույքի արտահայտում:

Իմպրեսիվ խոսք: Սկսում են տարբերակել մայրենի լեզվի որոշակի հնչյուններ, զգայուն են ինտոնացիաների նկատմամբ:

- **4-7 ամսական**՝ թոթովանքի սկիզբ

***Հաղորդակցում*:** Ակտիվ ժպիտ, ծիծաղ, ձայնային փոխազդեցություններ: Կարող են օգտագործել ժեստեր (օրինակ՝ ձգվել դեպի առարկան):

Էքսպրեսիվ խոսք: Ձայնի բարձրության և ուժի փոփոխություններ, փչելու կարողության ձևավորում: Սկսվում է

թոթովանքը, որն արտահայտվում է կրկնվող բաց վանկերի արտաբերմամբ (օրինակ՝ «բա-բա-բա», «մա-մա-մա»), որոնք սկզբում արտաբերվում են ըստ ընդօրինակման:

Իմպրեսիվ խոսք: Արձագանքում են իրենց անվանը, շրջվում են ձայնի աղբյուրի ուղղությամբ:

- **8-12 ամսական**՝ թոթովանքի «ծաղկման» (զարգացման) և առաջին բառերի շրջան

Հաղորդակցում: Օգտագործում են բարդ ժեստեր (օրինակ՝ ցույց տալ, ձեռքով հրաժեշտ տալ), հետևում են մեծահասակի հայացքին:

Էքսպրեսիվ խոսք: Տարբեր վանկերի համադրում (օրինակ՝ «բա-դա-գա»): Սկսում են արտաբերել առաջին իմաստալից բառերը (սովորաբար 10-12 ամսականում)՝ «մամա», «պապա»:

Իմպրեսիվ խոսք: Հասկանում են մի քանի պարզ բառեր, պարզ հրահանգներ (օրինակ՝ «Արի՛»), գիտեն ընտանիքի անդամների և մտերիմների անունները:

2. Վաղ լեզվական զարգացում (1-3 տարեկան)

Այս շրջանը նույնպես բաժանվում է մի քանի փուլերի.

- **12-18 ամսական՝** մեկբառանի նախադասությունների փուլ

Հաղորդակցում: Իրենց կարիքների մասին հայտնելու համար ակտիվորեն օգտագործում են ժեստեր և բառեր (զուգակցված):

Էքսպրեսիվ խոսք: Բառապաշարը կազմում է մոտ 5-20 բառ: Այս ժամանակահատվածում մեկ բառը (օրինակ՝ «Ջուր»)

արտահայտում է ամբողջ նախադասության միտքը («Ջո՛ւր տուր»):

Իմպրեսիվ խոսք: Ընկալումը շատ ավելի զարգացած է, քան խոսքի արտաբերությունը: Հասկանում են մոտ 50-100 բառ:

- **18-24 ամսական՝** երկբառ արտահայտությունների փուլ

Հաղորդակցում: Ավելի հաճախ են օգտագործում բառեր: Սկսում են խաղալ խաղեր, որոնց ընթացքում պետք է հերթով խոսել:

Էքսպրեսիվ խոսք: Բառապաշարն արագորեն աճում է (մինչև 50-200 բառ): Երեխաները սկսում են միացնել երկու բառ 1 արտահայտության մեջ (օրինակ՝ «Մամա, արի՛», «Ջո՛ւր տուր»): Հնչյունների արտաբերումը դեռ ճիշտ չէ:

Իմպրեսիվ խոսք: Հասկանում են պարզ հարցեր, կարող են հետևել երկու գործողություն պահանջող հրահանգների:

- **24-36 ամսական՝** «Հեռագրային խոսքի» և պարզ նախադասությունների փուլ

Հաղորդակցում: Երեխաները հաղորդակցման ժամանակ ավելի հաճախ են գործածում բառեր, նվազում է ժեստերի օգտագործումը: Սկսում են պատմել պարզ պատմություններ:

Էքսպրեսիվ խոսք: Բառապաշարը հասնում է 500-1000 բառի: Օգտագործում են 3-4 բառանի նախադասություններ («Ես ուտում եմ խնձոր»)՝ հաճախ բաց թողնելով կապական բառերը («հեռագրային խոսք»): Հնչյունային համակարգը շարունակում է զարգանալ:

Իմպրեսիվ խոսք: Հասկանում են բարդ նախադասությունների իմաստը, կարող են պատասխանել «Ո՞վ», «Ի՞նչ», «Որտե՞ղ» հարցերին:

3. Նախադպրոցական շրջան (3-5 տարեկան)

Հաղորդակցում: Զարգանում է հերթով խոսելու կարողությունը: Զրույցները դառնում են ավելի երկար և բարդ: Սկսում են օգտագործել հումոր, պատմել իրենց հետ տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Էքսպրեսիվ խոսք: Բառապաշարը զգալիորեն աճում է (մինչև 2000 բառ և ավելի): Նախադասությունները դառնում են ավելի բարդ՝ քերականորեն ճիշտ կառուցվածքով: Հնչյունային համակարգը հիմնականում ձևավորված է լինում, սակայն որոշ բարդ հնչյուններ (օրինակ՝ ռ, ր, լ) դեռևս կարող են սխալ արտաբերվել: Խոսքի առոգանական կողմն ավելի արտահայտիչ է դառնում:

Իմպրեսիվ խոսք: Հասկանում են բարդ հասկացություններ, կարող են հետևել բազմաքայլ հրահանգների:

4. Կրտսեր դպրոցական տարիք և վաղ դեռահասություն (6-13 (14) տարեկան)

Հաղորդակցում: Բարելավվում են զրույցի հմտությունները, հումորի զգացումը, հասկանում են երկիմաստություններ, ընկալում են հեգնանքը: Կարողանում են խոսել տարբեր թեմաների շուրջ, մասնակցել խմբային քննարկումների:

Էքսպրեսիվ խոսք: Հնչյունային համակարգը ամբողջությամբ ձևավորված է լինում: Խոսքը հստակ է: Բարելավվում է բարդ բառերի և բարդ նախադասությունների արտաբերումը: Խոսքի առոգանական կողմը նմանվում է մեծահասակի խոսքի առոգանությանը: Զարգանում են գրավոր խոսքի հմտությունները:

Իմպրեսիվ խոսք: Բառապաշարը շարունակում է աճել՝ համալրվելով գեղարվեստական, ակադեմիական և մասնագիտական եզրույթներով: Բարելավվում է պատճառահետևանքային կապերի ընկալումը (Филичкина, 2025):

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ. ԼԵԶՎԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Ժամանակակից հետազոտությունները փաստում են, որ մեծահասակների դերը վճռորոշ է երեխաների խոսքի ձևավորման և զարգացման գործընթացում: Ընդ որում, կարևոր է ոչ միայն խոսքի քանակը, այլ նաև որակը: Այսպես, երեխային ուղղված խոսքը պետք է պարունակի պարզ նախադասություններ, կրկնություններ, արտաբերվի բարձր ինտոնացիայով և դանդաղ տեմպով, ինչը նպաստում է լեզվի յուրացմանը (հնչյունաբանություն, բառապաշար և քերականական կառույց) (https://pmc.ncbi.nlm.nih.gov/articles/PMC7236655/):

Երեխայի խոսքին արձագանքելիս ծնողը պետք է ոչ միայն բուն պատասխանը հնչեցնի, այլև ընդլայնի իր խոսքը: Դա շատ ավելի արդյունավետ է, քան պարզապես հրահանգող կամ ուղղորդող խոսքը: Օրինակ, երբ երեխան ասում է՝ «Կատուն», ծնողը պետք է պատասխանի. «Այո՛, մեծ կատու է» (https://www.cambridge.org/core/books/language-development/parentchild-interaction-and-its-impact-on-language-development/19F82676629991644E487A31E81AD827):

Պետք է հիշել, որ խոսքը ձևավորվում է բացառապես **սոցիալական միջավայրում**: Առանց մարդկային շփման լեզվի ուսուցում տեղի չի ունենում: Հեռուստացույցները, համակարգիչները կամ այլ տեխնիկական միջոցները բավարար չեն երեխայի խոսքի ձևավորման և զարգացման համար: Խոսքի զարգացմանը նպաստում են.

- **Միասնական ուշադրությունը,** երբ երեխան և մեծահասակը միաժամանակ կենտրոնանում են միևնույն առարկայի կամ իրադարձության վրա, և մեծահասակն այդ պահին անվանում է դրանք:
- **Հուզական հիմքը.** կյանքի առաջին ամիսներին հաղորդակցումը կառուցվում է հուզական հիմքի վրա (ժպիտ, ինտոնացիա, գղգղանք) (https://ap.pensoft.net/article/24357/download/pdf/):

Ծնողների դերը երեխայի խոսքի ձևավորման գործընթացում

Ժամանակակից գիտությունը մեծ ուշադրություն է դարձնում ծնողների իրազեկությանը և նրանց ակտիվ մասնակցությանը երեխայի վաղ զարգացման գործում: Երեխայի խոսքի զարգացմանը նպաստելու համար ծնողներին խորհուրդ է տրվում.

1. **Երեխաների հետ խոսել հաճախ և շատ:** Խոսքի քանակն ու որակը ուղղակիորեն կապված են լեզվական արդյունքների հետ: Հարկավոր է օգտագործել պարզ, բայց բազմազան բառապաշար: Սակայն եթե երեխայի մոտ նկատվում է խոսքի զարգացման հապաղում կամ թերզարգացում, ապա պետք է խոսել հաճախ, սակայն կարճ ձևակերպումներով և պարզ բառերով:
2. **Նկարագրել գործողությունները:** Անհրաժեշտ է մշտապես բարձրաձայն պատմել, նկարագրել այն ամենը, ինչ ինքը՝ մեծահասակն է անում, և ինչ անում է երեխան: Օրինակ՝ «Մայրիկը լվանում է ձեռքերը», «Դու գնդակ ես բռնել»:

3. **Ընթերցել ամեն օր:** Գրքեր կարդալը զարգացնում է երեխայի բառապաշարը, քերականական կառուցվածքը և կապակցված խոսքը:
4. **Արձագանքել երեխայի նախաձեռնությանը:** Երբ երեխան ինչ-որ բան է ցույց տալիս կամ բառ է ասում, պետք է անպայման արձագանքել և ընդարձակել նրա ասած նախադասությունը: Սա ստեղծում է լեզուն յուրացնելու նպաստավոր պայմաններ:
5. **Խրախուսել հուզական փոխազդեցությունը:** Ժպիտին, գղգղանքին, թոթովանքին արձագանքելը զարգացնում է երեխայի հաղորդակցման մոտիվացիան, քանի որ մարմնական և հուզական արձագանքները վերածվում են հաղորդակցման գործիքների:
6. **Ստեղծել խոսելու անհրաժեշտություն:** Անհրաժեշտ է խուսափել երեխայի բոլոր ցանկությունները ժեստով կամ հայացքով կանխագուշակելուց կամ իրականացնելուց: Երեխան պետք է ունենա խոսքային հաղորդակցման անհրաժեշտություն (https://procediaonline.org/index.php/philosophy/article/download/984/865/902):

Ժամանակին միջամտելու կարևորությունը

Երեխայի բնականոն զարգացման ցուցիչների մասին գիտելիքները թույլ են տալիս ծնողներին խոսքի զարգացման հապաղման դեպքում **ժամանակին դիմել մասնագետի** (լոգոպեդ, մանկական նյարդաբան, հոգեբան և այլն): Ծնողներին խորհուրդ է տրվում վարել երեխայի խոսքի զարգացման օրագիր և արձանագրել երեխայի խոսքի ձեռքբերումները: Այն շատ կարևոր տեղեկություններ կհաղորդի մասնագետներին՝ այդպիսով հանդիսանալով կարևոր ախտորոշիչ գործիք: Անհրաժեշտ է հիշել, որ մասնագետների և ընտանիքի միջև համագործակցությունը հաջող շտկողական ազդեցության կարևորագույն նախապայմաններից է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Карпова Н. Л., Кузнецова Е. Н., Поприк Ю. Б. Роль родителей в коррекции речевых нарушений у детей/ Комплексные исследования детства, 2019, т. 1, № 1, с. 65-72.
2. Филичкина Т. В. Формирование экспрессивной стороны речи у детей: теоретические аспекты и практические рекомендации // Молодой ученый — 2025. — № 50 (601). — URL: https://moluch.ru/archive/601/131414.
3. The Modified Checklist for Autism in Toddlers, Revised with Follow-Up (M-CHAT-R/F; Robins, Fein, & Barton, 2009.
4. How young children learn language and speech: Implications of theory and evidence for clinical pediatric practice. *NIH, PMC7236655*: **URL:** https://pmc.ncbi.nlm.nih.gov/articles/PMC7236655/
5. Parent–Child Interaction and Its Impact on Language Development (Chapter 8). *Cambridge Core*: **URL:** https://www.cambridge.org/core/books/language-development/parentchild-interaction-and-its-impact-on-language-development/19F82676629991644E487A31E81AD827
6. The Model of Parental Competence in Ontogenesis and Dysontogenesis of Early Speech Development. *Academic Publishers*: **URL:** https://ap.pensoft.net/article/24357/download/pdf/

7. Ontogenesis of Speech Development. *PROCEDIA ONLINE*: **URL:** https://procediaonline.org/index.php/philosophy/article/download/984/865/902
8. https://www.unicef.org/parenting/child-care/21-learning-activities-babies-and-toddlers
9. https://raisingchildren.net.au/toddlers/connecting-communicating/communicating/toddlers-talking
10. https://novatorkids.ru/rol-neverbal-nogo-obshcheniya-v-razvitii-rechi
11. https://easterntherapync.com/beyond-words-understanding-nonverbal-communication-in-speech-therapy
12. https://specialeducationcambodia.com/the-role-of-nonverbal-communication-in-speech-therapy-what-children-learn-beyond-words/

Թադևոսյան Է. Ռ.

ԾՆՈՂԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 70:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում:
Երևան, Դ. Մալյան 43

ՀՄԿ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՍԱՆԿՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

www.hmk.am